ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 160-Ա

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԵՐԸ ԽՈՏԱՆԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով «Մար Մոս» ՍՊԸ-ի կողմից 20.12.2024թ-ին տրված «Գույքի շուկայական արժեքի վերաբերյալ եզրակացությունը» այն մասին, որ նշված գույքերը հետագա շահագործման պիտանի չեն, ենթակա են ուտիլիզացիայի և որ վերանորոգման ծախսերը մասամբ հնարավոր չեն, մասամբ՝ անիմաստ, քանի որ շուկայում առկա նմանատիպ գույքերի արժեքները ավելի ցածր են, քան վերանորոգման համար պահանջվող ծախսերը, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Փամբակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող ներքոնշյալ գույքերը հետագա շահագործման ոչ պիտանի լինելու պատճառով խոտանելուն:

1) Ջերմատաքացուցիչ - Փամբակ համայնք
2) Կուլտիվատոր - Դեբետ բնակավայր
3) Կուլտիվատոր - Արջուտ բնակավայր
4) Կցասայլակ - Արջուտ բնակավայր
5) Գյուղատնտեսական խոտհավաքիչ - Մարգահովիտ բնակավայր

Վերը նշված գույքերը ենթակա են ուտիլիզացիայի:

2. Համայնքի ղեկավարին՝ ուտիլիզացիայից ստացված սև մետաղը /1 կգ-ը 45 դրամ ներկայիս շուկայական արժեքով/, որպես ջարդոն վաճառելուց հետո վերոնշյալ գույքերը հանել համայնքի հաշվեկշռից:

3. Սույն որոշում ուժի մեջ է մտնում ստորագրման հաջորդ օրը:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ